

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ
ԺԱՄԸ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին`

Խորհրդի անդամներ`

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Հովսեփյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն»ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Լ. Հակոբյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Հրավիրվածներ`

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ֆ. Բաշոյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Հ. Պետրոսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի պայմանագրերի կառավարման բաժնի պետ
Ս. Մելիք-Յուլյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ֆինանսաիրավաբանական բաժնի պետ

1. Ծրագրի կառավարման խորհրդատուի մրցույթի շրջանակներում ներկայացված ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Ն. Երիցյան, Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

7. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության ընդհանուր գնահատման արդյունքները.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

ա. Safege (Բելգիա) և Eptisa (Իսպանիա) համատեղ ձեռնարկությանը հրավիրել պայմանագրային բանակցությունների,

բ. ԱԶԲ-ի հետ համատեղ քննարկել գնման գործընթացի ընթացակարգերով սահմանված ժամկետային ուշացումների վերաբերյալ ներկայացված տեղեկանքը և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

գ. ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհի եռաչափ մոդելավորմամբ տեսահոլովակի շնորհանդեսը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան ֆինանսական գնահատական:

2. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2012 թվականի պահպանման ծախսերի, Ծրագրի առաջին և երկրորդ տրանշերի ամփոփ բյուջեների հաստատում

(Ա. Հովսեփյան, Ն. Երիցյան, Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

7. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի 2012 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը, Ծրագիր 1 (տրանշ 1) և Ծրագիր 2 (տրանշ 2) ամփոփ բյուջեները.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Լ. Հունանյանին՝ մանրամասն ուսումնասիրել վարձակալական տարածքների համար առաջարկվող բոլոր տարբերակները, դրանց գները և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ